

## ՈՂՋՈՐՅՆ 150ԱՄԵԱՅ «ԲԱԶՄԱՎԷՊ»ԻՆ

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՐՈՒՑԱՆԻ

### ԱԽՈՅԵԱՆԻՆ

Մամլոյ եւ մշակութային մեր տարեգրութեանց 1843-1993 հարիւր-  
յիսունամեայ դրուագին մէջ՝ իր մէկուկէս դարու հայագիտական-  
դաստիարակչական առաքելութեամբ ու վարուցանով աննախորդ դե-  
րակատարութիւն ունեցած է Վենետիկի Մխիթարեանց այս պաշտօնա-  
թերթը, յատկապէս լեզուական-մշակութային, կրօնա-բարոյական,  
պատմական-հնագիտական եւ քաղաքական-աշխարհագրային արծար-  
ծումով:

Ոգին եւ տեսլականը՝ որոնց ճամբով Մխիթար իրեն շնորհուած սեւ  
հողը 1717ին պիտի վերածէր լուսաւորութեան, հոգեւոր, մշակութային  
եւ դաստիարակչական շարժումի կռուանի մը, ուղի հարթեցին Միա-  
բանութեան յետագայ տարիներու հերկ ու վարուցանին, զօրաշարժ մը  
վաւերագրեցին իրենց հրատարակչական, դաստիարակչական, գիտա-  
կան ու հոգեւոր ծառայութեամբ:

Վենետիկի Մխիթարեանց 1700-1990ական տարիներու ծառայու-  
թիւնը հայ մշակոյթին, դաստիարակչական շարժումին, սերմնացա-  
նութիւնը սերունդներու կոփումին եւ ազգային դաստիարակութեան  
վերաբերող մարգերու մէջ՝ կոչ մըն է ո՛չ միայն «Բազմավէպ»ով  
փոխանցուած հարստութիւնը «աղօթք հանդերձ ծնրադրութեամբ» ող-  
ջունելու, այլե՛ւ գիտակցելու անոնց ներկայի եւ ապագայի վարու-  
ցանին փրկարար դերակատարութեան՝ յետնորդներու ազգային գո-  
յատեւման պայքարին մէջ:

ՄԻՆԱՍ ԹԵՕԼԷՕԼԵԱՆ